ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

1. Տեղեկատվություն Ընկերության մասին

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է 1969թ. որպես «Արփասևանշին» հատուկ մասնագիտացված շինարարական կազմակերպություն: 1995թ.-ին վերակազմավորվել է ՀՀ էներգետիկայի նախարարության «Արփա-Սևան» ՓԲԸ, իսկ 1998թ.-ին՝ «Արփա-Սևան» ԲԲԸ:
Ընկերությունը գրանցված է պետական ռեգիստրի Արաբկիրի ստորաբաժանման կողմից գրանցման համարը՝ 264.120.00831 գրանցման ամսաթիվը 16.02.1995թ :

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 51 130 000 ՀՀ դրամ: Ընկերության հիմնական գործունեությունը կապիտալ շինարարության իրականացումն է քաղաքաշինության, էներգետիկական, հիդրոտեխնիկական, կապի և տրանսպորտային ոլորտներում:

19.01.2011թ. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից Ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը ցուցակվել և ընդգրկվել են Բորսայի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում և թույլատրվել է առևտրի ցուցակված բաժնետոմսերի հասցեական գործարքների և ռեպո գործարքների հարթակներում:

Սկսած 2011թ.-ից Ընկերությունը հետևում է ՀՀ Կառավարության 30.12.2012թ. N 1769-Ա որոշմամբ հավանության արժանացած Կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին:

2. Արտաքին աուդիտն իրականացնող անձը

Ընկերության աուդիտը իրականացնում է «ԹՄ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը:
«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ գտնվելու վայրն ՀՀ ք. Երևան 0014 Պ. Սևակ 8 Հեռ.՝ (374 60) 60 70 80, www. tmaudit.am: «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ այլ մասնագիտական միություններին չի անդամակցում:

3. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Կառավարման մյուս մարմիններն են՝ խորհուրդը վերստուգող հանձնաժողովը և գլխավոր տնօրենը :
Ընկերությանը սահմանել է կառավարման մարմինների հետևյալ սխեմատիկ կառուցվածքը



Ընկերության խորհրդի քանակական կազմը սահմանված է 6 անդամից:
Ընկերության վերստուգող հանձնաժողովը կազմված է 3 անդամից:

Ընկերության կառավարման մարմինների անդամների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ներքոհիշյալ աղյուսակներում:

3.1.Խորհուրդ

Աղյուսակ 1

	Ազգանուն անուն հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերությունում	փոխկապակցված ընկերությունում	
1.	Հակոբյան Ռաֆայել Արմենի	ք. Երևան Աղասու փող. 2/5 Քանաքեռ Զեյթուն	Խորհրդի նախագահ	«Նուռլոջիք» ՍՊԸ և «Ա-Ս Էներջի» ՍՊԸ տնօրեն	0
2.	Հակոբյան Պարույր Հակոբի	ք. Երևան. Անտառային փող. 122/7 տուն	Խորհրդի անդամ, Գլխ. տնօրեն	«Մեղմ զեփյուռ» ՍՊԸ և «Ջրասահք» ՍՊԸ-տնօրեն, «Արփա-Սևան» ԲՀ - հոգաբարձուների խորհրդի նախագահ, «Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ	11 410հատ/ 55.7892 %

3.	Նավասարդյան Կարինե Արշավիրի	ք. Երևան Զ. Սարկավագի 123.36	Խորհրդի և Աուդիտի հանձնաժողովի անդամ	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ	2673հատ / 13.0696 %
4.	Վարդանյան Զորիկ Հովհաննեսի	ք. Երևան Նորքի 8-րդ զանգ. 29շ 33բն	Խորհրդի անդամ, տնտեսագիտական բաժնի ղեկավար	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ «Արփա-Սևան» ԲՀ - հոգաբարձուների խորհրդի անդամ	34հատ / 0.166 %
5.	Պողոսյան Գոռ Միհրի	ք. Երևան Քանաքեռ - Զեյթուն, Քանաքեռ 11 փող. 16տուն	Խորհրդի անդամ, Աուդիտի հանձնաժողովի նախագահ	-	0
6.	Բելլուսյան Միքայել Նորայրի	ք. Երևան Աղայան փող.12ա բն 5	Խորհրդի և Աուդիտի հանձնաժողովի անդամ	-	0

3.2. Վերստուգող հանձնաժողով

Աղյուսակ 2

	Ազգանուն անուն հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերութ յունում	փոխկապակցված ընկերությունում	
1.	Հայկարամյան Անահիտ Աշոտի	ք. Երևան Գայի պողոտա 27շ. բն. 50	Առաջատար հաշվապահ	-	0
2.	Ալեքսանյան Սաթենիկ Վոլոդյայի	ք. Երևան Հր. Քոչար 25շ. 3 բն.	Ադմինիստրատիվ օգնական	-	0
3.	Սարյան Սուրեն Վլադիմիրի	ք. Երևան Թումանյան 39 բն. 10	-	-	0

- Վերջին հինգ տարվա ընթացքում ընկերության կառավարման մարմինների անդամների նկատմամբ դատական գործեր չեն հարուցվել պետական որևէ կառավարման մարմնի կողմից պատասխանատվության չեն ենթարկվել և առնչություն չեն ունեցել որևէ սնանկության լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացի հետ:

- Շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև բացակայում է:

4. Տեղեկություններ դուստր և փոխկապակցված անձանց վերաբերյալ

4.1. «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը՝

- 15.06.2004թ. հիմնադրել է «Արփա-Սևան նախագիծ» փակ բաժնետիրական դուստր ընկերությունը: Հասցեն ՝ 0012. ք. Երևան Վ. Վաղարշյան -20:

«Արփա-Սևան» ԲԲԸ տիրապետում է դուստր ընկերության բաժնային արժեթղթերի 100 տոկոսին:
«Արփա-Սևան» ԲԲԸ և «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները փոխկապակցված անձիք չեն:
«Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները և նրանց հետ փոխկապակցված անձինք չեն հանդիսանում «Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերեր:

- 23.08.2010թ. հիմնադրել է «Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամը: Հասցեն՝ 0012. ք. Երևան Վ. Վաղարշյան -20:

4.2. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձինք են՝

1. «Դիլիջանի առողջարան» ԲԲԸ
2. «Բազենք» ՓԲԸ
3. «Ջրասահք» ՍՊԸ
4. «Մեղմ Ձեփյուռ» ՍՊԸ
5. «Սի-լաբ» ՍՊԸ
6. «Ա-Ս Էներջի» ՍՊԸ
7. «Ա-Ս Ինվեսթմենթս» ՍՊԸ
8. «Նուռլոջիք» ՍՊԸ:

5. Խոշոր բաժնետերերը

Ընկերության խոշոր բաժնետերերն են՝

1.Հակոբյան Պարույր Հակոբի - տիրապետում է 11 410 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 55.7892 %-ը:

2. Նավասարդյան Կարինե Արշավիրի - տիրապետում է 2673 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 13.0696 % -ը:

Բոլոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տալիս են ձայնի միևնույն իրավունքը:

6. Աշխատակիցները

Ընկերության աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են թիվ -3 աղյուսակում:

Աղյուսակ 3

	Տարեթվերը			
	2016թ	2017թ	2018թ	2019թ
Աշխատողների միջին տարեկան թվաքանակը մարդ	380	410	391	313
որից ղեկավարներ	42	42	43	40

7.Արտոնագրեր և լիցենզիաներ

1. ՀՀ Քաղաքաշինության նախարարություն

ԼԻՑԵՆԶԻԱ 7496
ՔԱՂԱՔԱՇԻՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
(Բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների)
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 01
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 02
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 03
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 04
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 05
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԿԱՊԻ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

2. ԼԻՑԵՆԶԻԱ 17047
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
/ Բացառությամբ կոնստրուկտորական մասի ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների/

Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 17 047 - 2
ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ
Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 17047 - 4
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ
Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 17047 - 6
ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ և ՀԱՄԱԿԱՐԳԵՐ
Տրված է 22.03.2019թ. գործողության ժամկետը -անժամկետ

3.Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԼԻՑԵՆԶԻԱ
Պայթուցիկ նյութերի պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման
ՊՆՊՍԱՊԱ N 32
Տրված է 11.02.2013թ. գործողության ժամկետը - անժամկետ:

4. TUV InterCert Saar Սերտիֆիկատ N 17-Q-5010001-TIC
Հիդրոէներգետիկ կառույցների էներգետիկ համակարգերի շինարարության արտադրության շահագործման և թունելների նկատմամբ ներդրված ԻՍՈ 9001:2015:
Տրված է 19.10.2017թ. ուժի մեջ է մինչև 18.10.2020թ.

5. Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ Սերտիֆիկատ N 001/E-003-0002-2017 Բնակելի հասարակական և արտադրական տրանսպորտային հիդրոտեխնիկական էներգետիկ կապի ոլորտներում շինարարության պայթուցիկ նյութերի պայթեցման սարքավորումների և պայթեցման աշխատանքների նկատմամբ ներդրված ԻՍՈ 14001:2015 :
Տրված է 04.12.2017թ. ուժի մեջ է մինչև 04.12.2020թ.

8. Բիզնեսի արդյունքների նկարագիրը

Հիմնական գործունեությունը և շուկաները

2019թ. ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների, վաճառքից և մատուցված ծառայությունների իրացումից հասույթը կազմել է՝ 3 112 916 հազ.դր. որոնց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են թիվ -4 աղյուսակում:

Աղյուսակ 4

հազ.դր.

1	Աշխատանքների կատարումից հասույթ	2 543 331
2	Վաճառքից հասույթ	323 963
3	Ծառայությունների մատուցումից հասույթ	245 622

Ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքները և մատուցած ծառայությունները իրացվում են ներքին շուկայում:

9.Հիմնական միջոցները

Ընկերությանը պատկանող հիմնական միջոցների շուկայական արժեքի ճշգրտման նպատակով, 01.01. 2019թ. դրությամբ կատարվել է <<Արփա-Սևան>> ԲԲԸ պատկանող անշարժ գույքի և մեքենա-սարքավորումների շուկայական արժեքի գնահատում: Գույքի գնահատումը իրականացվել է <<Օրան>> ՍՊԸ-ի կողմից: Գնահատման արդյունքում <<Արփա-Սևան>> Ընկերությանը պատկանող անշարժ գույքի շուկայական արժեքը նվազել է՝ 288 509 215 ՀՀ դրամով, իսկ մեքենա-սարքավորումների շուկայական արժեքը ավելացել է՝ 836 461 687 ՀՀ դրամով:

31.12.2019թ. դրությամբ ընկերության հիմնական միջոցների արժեքը կազմել է 5 113 188 հազ. դր., կուտակված մաշվածությունը՝ 2 497 794 հազ. դր., հաշվեկշռային արժեքը 2 615 394 հազ. դր.: Հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմել է 48.9 %:

Ըստ առանձին դասերի հիմնական միջոցների արժեքի հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ - 5 ում:

Աղյուսակ 5

հազ. դր.

Դասի անվանումը	Արժեքը	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռ. արժեքը	Մաշվածքը %
Շենքեր և կառուցվածքներ	570 433	24 897	545 536	4,4
Մեքենա - սարքավորումներ	2 446 122	1 159 593	1 286 529	47,4
Տրանսպորտային միջոցներ	1 616 110	1 202 912	413 198	74,4
Արտադրական և տնտեսական գույք	76 224	61 745	14 479	81,0
Այլ հիմնական միջոցներ	58 981	48 647	10 334	82,5

Հողամասեր	345 318		345 318	
Ընդամենը հիմնական միջոցներ 31.12.2019թ.	5 113 188	2 497 794	2 615 394	48,9

Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են՝

Ընդամենը հիմնական միջոցներ 31.12.2018թ.	6 185 213	3 610 997	2 574 216	58,4
Նախորդ տարվա համեմատաճը	-1 072 025	-1 113 203	41 178	

Ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը նախորդ տարվա համեմատ աճել է 1.6 % որը կազմում է 41 178 հազ.դր.:

Հիմնական միջոցների արժեքի աճը հիմնականում տեղի է ունեցել ընկերության կողմից նոր հիմնական միջոցների ձեռք բերման ինչպես նաև գործող շինարարական մեքենաների և տրանսպորտային միջոցների հիմնանորոգման և արդիականացման արդյունքում:

Վերջին հինգ տարիների ընթացքում Ընկերության կողմից ձեռք բերված հիմնական միջոցների և արդիականացման վրա կատարված ծախսերի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ - 6 ում:

Աղյուսակ 6
հազ.դր.

Հիմնական միջոցների դասը	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ
Մեքենաներ և սարքավորումներ	123 268	37 186.5	471 791	194 183.5	29311.7
Տրանսպորտային միջոցներ	23 867	69 589	328 235	32 094.8	2916.7
Այլ հիմնական միջոցներ	1 1530	7 261	15 039	13 512.8	23057.1
Ընդամենը	210 608	200 118	815 065	239 791.1	55285.6

Ընկերության տրամադրության տակ գտնվող էական մեծություն կազմող հիմնական միջոցը դա ք. Երևան Վ.Վաղարշյան 20 հասցեում գտնվող 1840.1 քառ. մ. տարածքով չորս հարկանի վարչական շենքն է, որի հաշվեկշռային արժեքը իր զբաղեցրած հողատարածքի հետ միասին կազմում է 470 048 հազ.դրամ:

Ընկերությանը պատկանող էական մեծություն չկազմող բայց Ընկերության համար կարևոր նշանակություն ունեցող շենքերից շինություններից և հողատարածքներից են՝

- ք. Երևան, Արտաշիսյան -106 հասցեում գտնվող 903.2ք.մ. անշարժ գույքը 0.60637 հա հողատարածքով, որը օգտագործվում է ընկերության ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման վերանորոգման արհեստանոցների պահեստների համար;
- ք. Երևան, Արտաշիսյան -105 հասցեում գտնվող 1606.7ք.մ. անշարժ գույքը 1.78845 հա հողատարածքով, որը օգտագործվում է որպես ապրանքանյութական արժեքների

պահեստավորման բազա, վերանորոգման արհեստանոց, բետոնի պատրաստման արտադրամաս և այլն;

Բոլոր հիմնական միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Ընկերությանը:

Սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող գույքից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ որպես վարկային և բանկային երաշխիքների պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված է ք. Երևան, Վ.Վաղարշյան 20 հասցեում գտնվող վարչական շենքը;

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ում որպես վարկային և բանկային երաշխիքային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված են Ընկերության խոշոր բաժնետեր Պարույր Հակոբյանին պատկանող 11 286 հատ անվանական բաժնետոմսերը;

Գրավադրված հիմնական միջոցների օգտագործման սահմանափակումները կայանում են նրանում, որ առանց գրավառուի համաձայնության ընկերությունը չի կարող այլ տեղ գրավ դնել, վարձակալության հանձնել կամ օտարել այդ հիմնական միջոցները:

10. Ֆինանսական վերլուծություն

10.1. Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծություն

Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծությունը իրականացնելու համար ընկերության հաշվեկշիռը ներկայացվում է ներքոհիշյալ տեսքով՝

Աղյուսակ 7

Ցուցանիշների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին		Նախորդ ժամանակաշրջանի վերջին		Աճը	Աճի տեմպը
	հազ.դր.	%	հազ.դր.	%	հազ.դր.	%
1.Ակտիվներ	5 371 812	100,0	5 876 753	100,0	-504 941	91,4
1.1. Ոչ ընթացիկ ակտիվներ	3 494 484	65,1	3 766 812	64,1	-272 328	92,8
1.2.Ընթացիկ ակտիվներ	1 877 328	34,9	2 109 941	35,9	-232 613	89,0
1.2.1. Պաշարներ	763 781	14,2	390 078	6,6	373 703	195,8
1.2.2.Դեբիտորական պարտքեր	808 622	15,1	1 323 664	22,5	-515 042	61,1
1.2.3.Դրամական միջոցներ	304 925	5,7	396 199	6,7	-91 274	77,0
2.Պասիվներ	5 371 812	100,0	5 876 753	100,0	-504 941	91,4
2.1.Սեփական Կապիտալ	4 427 356	82,4	4 767 775	81,1	-340 419	92,9
2.2.Փոխառու կապիտալ	944 456	17,6	1 108 978	18,9	-164 522	85,2
2.2.1. Ոչ ընթացիկ պարտավորություններ	57 403	1,1	119 923	2,0	-62 520	47,9
2.2.2. Ընթացիկ ֆինանսական	5 248	0,1	307 615	5,2	-302 367	1,7

պարտավորություններ						
2.2.3.Կրեդիտորական պարտք	881 805	16,4	681 440	11,6	200 365	129,4

Նախորդ տարվա համեմատ Ընկերության հաշվեկշռի ակտիվների և պասիվների կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Էական փոփոխություններ են տեղի ունեցել ակտիվների և պասիվների դինամիկան բնութագրող ցուցանիշներում, մասնավորապես՝

Ընկերության ակտիվները բացարձակ արժեքով նախորդ տարվա համեմատ նվազել է՝ 504 941 հազ. դր. կամ 8,6 % , որից՝

- Ոչ ընթացիկ ակտիվների գումարը նախորդ տարվա համեմատ նվազել է 272 328 հազ.դր. կամ 7.2%;
- Ընթացիկ ակտիվների գումարը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է 232 613 հազ.դր. կամ 11.0 % ;

Էական փոփոխություններ են տեղի ունեցել նաև պասիվների դինամիկան բնութագրող ցուցանիշներում, մասնավորապես՝

Սեփական կապիտալը բացարձակ արժեքով նախորդ տարվա համեմատ նվազել է 340 419 հազ.դր. կամ 7.1 %: Նշված փոփոխությունը հիմնականում տեղի է ունեցել ֆինանսական գործիքների սկզբնական չափումից առաջացած վնասի պատճառով;

Փոխառու կապիտալը նվազել է 164 522 հազ.դր. կամ 14.8%, որից՝

- Ոչ ընթացիկ պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ նվազել են 62 520 հազ.դր. կամ 52.1%:
- Ընթացիկ ֆինանսական պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ նվազել են 302 367 հազ.դր. կամ 98.3% :
- կրեդիտորական պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ աճել են 200 365 հազ.դր. կամ 29.4% :

10.2. Ֆինանսական կայունության վերլուծություն

Ֆինանսական կայունության վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

10.2.1. Նինանսական անկախության գործակից:

$$Գ_1 = 4\,427\,356 / 5\,371812 = 0,82$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:

Ցուցանիշի 0.82 արժեքը ցույց է տալիս, որ ընկերությունն իր գործունեությունը հիմնականում ֆինանսավորում է սեփական կապիտալի հաշվին:

10.2.2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից:

$$Գ_2 = 944\,456 / 4\,427\,356 = 0,21$$

Ցուցանիշի 0.21 արժեքը ցույց է տալիս որ ընկերության պարտավորությունները սեփական կապիտալի միավորի հաշվով գտնվում են ցածր մակարդակում:

10.2.3. Ինքնավարության գործակից:

Գ3 = 4 484 759 / 5 371812 = 0,83

Ինքնավարության գործակցի 0.83 արժեքը ցույց է տալիս որ Ընկերության միջոցների հիմնական մասը ձևավորվել է երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հիմնականում՝ սեփական կապիտալի հաշվին:

10.2.4. Գործող կապիտալ:

$Գ_4$ = 1 877 328 ՎՆ 887 053 = 990 275 հազ.դր.

Գործող կապիտալի արժեքը ցույց է տալիս, որ ընթացիկ ակտիվները ապահովված են սեփական կապիտալով:

10.2.5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$Գ_5$ = 1 139 603 / 2 128 233 = 0.54

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.1:

10.2.6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$Գ_6$ = 990 275 / 490 438 = 2,02

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:

10.2.7. Սեփական կապիտալի մանևրայնության գործակից:

$Գ_7$ = 990 275 / 4 427356 = 0,22

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:
Ցուցանիշի 0.22 արժեքը ցույց է տալիս որ ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցները ամբողջությաբ չեն օգտագործվում:

10.2.8. Գույքի ռեալ արժեքի գործակից:

$Գ_8$ = 3 105 832 / 5 371812 = 0,58

Այս ցուցանիշի 0.58 արժեքը (ընդունելի փոքրագույն արժեքը 0.5) ցույց է տալիս որ ընկերության արտադրական պոտենցիալը գտնվում է բավարար վիճակում:

10.3. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

10.3.1. Ընթացիկ իրացվելիության գործակից

$$Գ_9 = 1\,877\,328 / 887\,053 = 2,12$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը՝ 2.12 ցույց է տալիս որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ամբողջությամբ ապահովված են ընթացիկ ակտիվներով:

10.3.2. Արագ իրացվելիության գործակից:

$$Գ_{10} = 1\,386\,890 / 887\,053 = 1,56$$

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:
Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը և ցույց է տալիս որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ապահովված են առավել իրացվելի ակտիվներով:

10.3.3. Բացարձակ իրացվելիության գործակից:

$$Գ_{11} = 304\,925 / 887\,053 = 0,34$$

Այս գործակցի ցանկալի արժեքը ընկած է (0.2; 0.5) թվերի սահմաններում:

10.4. Ֆինանսական արդյունքների վերլուծություն

Ընկերության ֆինանսական արդյունքների և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Ցուցանիշների անվանումը	h/h	2019թ.		2018թ.		աճը	աճի տեսակը
		հազ.դր	%	հազ.դր	%	հազ.դր	%
Հասույթ	22	2 932 423	100	3 812 614	100	-880 191	76,9
Վաճառքի ինքնարժեք	22	-2 637 987	90,0	-3 059 137	80,2	421 150	86,2
Համախառն շահույթ		**294 436**	**10,0**	**753 477**	-19,8	**-459 041**	39,1
Այլ եկամուտներ	23	180 493	**6,2**	60 910	-1,6	**119 583**	296,3
Իրացման և այլ ծախսեր	5	-3 945	-0,1	-672	0,0	-3 273	587,1
Վարչական ծախսեր	6	-248 269	-8,5	-217 576	5,7	-30 693	114,1
Այլ (ծախսեր)	7	-183 545	-6,3	-85 224	2,2	-98 321	215,4

Գործառնական գործունեությունից շահույթ	**8**	**39 170**	**1,3**	**510 915**	-13,4	**-471 745**	7,7
Ֆինանսական եկամուտներ	9	96 204	3,3	102 608	-2,7	-6 404	93,8
Ֆինանսական ծախսեր	10	-18 976	0,6	-16 853	0,4	-2 123	112,6
Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստ		-288 509	9,8		0,0		
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	11	143	0,0	-759	0,0	902	-18,8
Շահույթը մինչև հարկումը	**12**	**-171 968**	**-5,9**	**595 911**	-15,6	**-767 879**	**-28,9**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	13	33 573	1,1	-98 590	2,6	132 163	-34,1
Շահույթը հարկումից հետո	**14**	-138 395	-4,7	497 321	-13,0	-635 716	**-27,8**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	15	**-138 395**	**-4,7**	**497 321**	-13,0	**-635 716**	-27,8
-որից մայր կազմակերպության սեփականատերերին	16	-138 395	-4,7	497 321	-13,0	-635 716	-27,8
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	17	-6,77		24,32			-27,8
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ		836462		0			
Հիմնական միջոցների վերագնահատումից հետաձգված հարկեր		-167292		0			
Համապարփակ ֆինանսական արդյուքների հանրագումար		530775		0			

Կատարված աշխատանքների մատուցած ծառայությունների իրացումից հասույթը նախորդ տարվա 3 812 614 հազ.դր. համեմատ նվազել է 880 191 հազ.դր.-ով և կազմել՝ 2 932 423 հազ.դր: Համախառն շահույթը կազմել է 294 436 հազ.դր.:

Նշված փոփոխությունը հիմնականում պայմանավորված է Ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների ծավալների նախորդ տարվա համեմատ՝ 997 060,6 հազ.դր. նվազմամբ և այդ աշխատանքների ինքնարժեքի աճով, որի տեսակարար կշիռը հասույթից կազմել է 90 % նախորդ ժամանակաշրջանի 80.2 % դիմաց:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության գործառնական գործունեությունից շահույթը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 471 745 հազ.դր. կամ 92.3% և կազմել է 39 170 հազ.դր.:

Ֆինանսական եկամուտները կազմել են 77 371 հազ.դր. ;
Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտների հանրագումարը (հաշվի առած վերագնահատումից կորուստները և հետաձգված հարկերը) կազմել են 380 661 հազ.դր.:
Արդյունքում շահույթը կազմել է 530 775 հազ.դր:

10.5. Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծություն

Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս գնահատել թե որքանով է Ընկերությունը արդյունավետ օգտագործում իր միջոցները:

Վերլուծության այս փուլում առանձնացվում են հետևյալ ցուցանիշները՝

1. Շրջանառելիության ցուցանիշներ
2. Շահութաբերության ցուցանիշներ

10.6. Ակտիվների շրջանառելիության վերլուծություն

Շրջանառելիության գործակիցների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

	Ցուցանիշների անվանումը	Շրջանառելիության գործակիցների			
			Արժեքները		Փոփոխության տեմպը %
			2019թ.	2018թ.	
1	Ակտիվների շրջանառելիության գործակից	$Գ_{12}$	0,52	0,64	81,3
2	Սեփական կապիտալի շրջանառ.գործակից	$Գ_{13}$	0,64	0,81	79,0
3	Արտադրության միջոցների շրջանառելիության գործակից	$Գ_{14}$	0,98	1,24	79,0
4	Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակից	$Գ_{15}$	1,13	1,41	80,1
5	Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակից	$Գ_{16}$	1,47	1,78	82,6
5.1	Ընթացիկ ակտիվների շրջապտույտի տևողությունը օրերով	$Գ_{17}$	245	202	
6	Գործող կապիտալի շրջանառելիության գործակից	$Գ_{18}$	2,78	3,61	77,0

6.1	Գործող կապիտալի շրջապտույտի տևողությունը օրերով	$Գ_{19}$	129	100	
7	Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակից	$Գ_{20}$			
8	Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից:	$Գ_{21}$	2,38	3,03	78,5
8.1	Դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը՝	$Գ_{22}$	151	119	
9	Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	$Գ_{23}$	3,75	4,52	82,96
9.1	Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը օր	$Գ_{24}$	96	80	121
10	Պաշարների շրջանառելիության գործակից	$Գ_{25}$	7	10	70

Ընկերության ակտիվների շրջանառելիության վիճակը բնութագրող ցուցանիշները նախորդ տարվա համեմատ զգալիորեն վատացել են, որը հիմնականում պայմանավորված է հաշվետու տարում հասույթի նվազմամբ:

10.7. Շահութաբերության վերլուծություն

Կապիտալի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

	Շահութաբերության գործակիցների՝				
	Ցուցանիշների անվանումը		Արժեքները		Աճի տեմպը
			2019թ.	2018թ.	%
1	Ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{26}$	0,0944	0,0835	113,1
2	Սեփական կապիտաիլ շահութաբերության գործակից	$Գ_{27}$	0,1154	0,1060	108,9
3	Իրացման շահութաբերության գործակից	$Գ_{28}$	0,1810	0,1304	138,8
4	Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{29}$	0,2827	0,2357	119,9

			2019թ.	2018թ.	%
1	Ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{26}$	0,0944	0,0835	113,1
2	Սեփական կապիտալ շահութաբերության գործակից	$Գ_{27}$	0,1154	0,1060	108,9
3	Իրացման շահութաբերության գործակից	$Գ_{28}$	0,1810	0,1304	138,8
4	Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{29}$	0,2827	0,2357	119,9

Կապիտալի շահութաբերության մակարդակը բնութագող գործակիցների արժեքի աճը նախորդ տարվա համեմատ հիմնականում պայմանավորված է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում առաջացած օգուտներից:

11. Շահույթի բաշխումը և կանխատեսումը

Վերջին հինգ տարվա ընթացքում Ընկերության զուտ շահույթի օգտագործման և շահութաբաժինների վճարմանն ուղղվեղ գումարների վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

հազ. դր.

Ցուցանիշների անվանումը	Տարեթվերը				
	2014թ	2015թ	2016թ	2017թ	2018թ
Զուտ շահույթը	161 696	50 674	195 874	889 356	497 321
Շահութաբաժինների վճարմանն ուղղվող գումարը	105 000	80 000	153 390	306 780	153 390
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	7.91	2.48	9.58	43.49	24.3

Նախատեսվում է 2019թ. շահութաբաժինների վճարման համար օգտագործել 51 130 հազ.դր.:

Գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյան

Կատարող Զորիկ Վարդանյան
հեռ./012/ 21 11 11 (138)